

Ըսէ Դ. հարցումը Պ. փունջ:

«Դ. Ստոյգ է . . . հիւանդանոցին կապար տառերը ազգային դրամով նորէն ձուլուելէն ետեւ խեղճ փոխադրուած է առանց գիտութեան ազգային վարչութեան:»

— Հա՛, Պ. փունջ, հին տառերը իբրեւ խուրտավաթ ծախուած է, առնողն ուր ուզէ կը փոխադրէ, բայց ոչ ազգային դրամով, տեսա՞ր որ անխոհեմ ես, քանզի աս ընդհանուր հաշուէն վերջը ըլլալու հարցում մ'էր: Ըսէ նաեւ Ե. հարցումը:

«Ե. Ստոյգ է . . . հիւանդանոց փոխադրութեան համար 4000 ղուրուշէն աւելի ծախքով մեքենայ մը չի նուաճեալ եւ այժմ անգործածելի մնացած է:»

— Օրինաւոր հիւանդանոցի մը պէտք եղածն հոգալը՝ դաշնագրին Բ. յօդուածոյն համեմատ անօրէնին արտօնութիւնն է, երբ այն մեքենայ ըսածդ ալ կատարելագործի, պիտի գործածուի, ինչպէս որ Զ. հարցումիդ մէջի կտուր՝ այժմ բաները ուրիշ միջոցով առանց ծախուել փոխադրուելուն համար այսօր անգործածելի է, եւ է. հարցումիդ մէջի յիշած մոմատան ջրհանը թէ եւ այսօր անգործածելի է, բայց վաղն արհեստարանին համար շատ կարեւոր է, ասոնց ամէնը օրինաւոր հիւանդանոցի մը պիտոյններն են եւ հարցումը քեզի չվերաբերիր, վասն զի Պ. փունջ, գուցէ հիւանդանոցի վրայ երբեք գաղափար չունիս:

Լաւ կրնէ այն տնօրէնը, որ քանի պատեհութիւն գտնէ հետզհետէ եւ քիչ քիչ պակասները հոգայով կատարելութեան հասցունելու կը ջանայ:

Աղէ յառաջ բեր Ը. հարցումը ալ . . .
«Ը. Ստոյգ է . . . որ 1600 ղուրուշէն ձի մը առնուած եւ ի վերջոյ 500 ղուրուշէն ծախուած է,» մինչդեռ նոյն միջոցին նոյն ձիուն օրինաւոր դնորդներ գտնուած են:»

— Աս վերջին խօսքդ ստոյգ չէ, եւ առաջինն ալ քու գիտցածիդ պէս չէ, եւ հարցումը ալ տեղ չի եղունք, զի Պաարիարքարանը ծախել տուեր է. յառաջ բեր յաջորդ հարցումը:

«Թ. Ստոյգ է . . . որ հիւանդանոցի պաշտօնէից 15000 ղուրուշէն չափ ամսական կը վճարուի, քանի որ 7000 ղուրուշով կարելի է ըլլալ աւելի ձեռնհաս պաշտօնեաներով հանդերձ:»

— Տղայի նման կըխօսիս Պ. փունջ գտիր ըսածիդ պէս ածան եւ ձեռնհաս մարդիկ, առաջինները թող տրուելով ատոնք գործածուին, աղէկ չըլլա՞ր, այս միջոցով դուն ալ աս մասին բոլորովին քու անփորձ ըլլալդ կը տեսնես: Ի՞նչ հարկ կայ 7000 ղուրուշ տալ, հին տանի նման ձրի ալ կըլլայ, թէ եւ քիթդ բերանդ կը դառնայ, Հետեւեալ հարցումդ ի՞նչ է:

«Ժ. Ստոյգ է որ սօզթօր Գալուստեանը հիւանդանոցի վրայ հետեւեալ հաշուով ծանրացած է. — 1500 ղուրուշ իր ամսականը, 200 ղուրուշ քէնիւնը, 200 ղուրուշ յատուկ ոպաստօրինը, 560 ղուրուշ ձիու վարձը եւ 1260 ղուրուշ իր 7 բաժին կե. բակուրը 3 տեսակի վրայ:»

— Աս հարցումը գիտե՞ս, ի՞նչ աստիճան յիմարական, տիտայական, պէվէկական եւ չիյտեմ ալ ինչական ըսեմ. Բաւզի աս հար-

ցումիդ մէջ թէ քու մասնաւոր թշնամութիւն ունենալդ եւ թէ մէկ քանի տղէտ հակառակորդներու գործիք ըլլալդ յայտնի կը տեսնուի. Բաց յայտնէ աս հարցումդ գիտե՞ս, ինչ աստիճան անխոհեմ ուղեղի ծընունդ է. օրինակով մը բացատրեմ, եթէ բացէ ի բաց խենթ եմ ով տէր, գրած ըլլայիր, աս հարցումիդ գորութիւնը պիտի չունենար, ինչո՞ւ սօքթօրը հիւանդանոցին վրայ ծանրացած ըլլայ, աշխատողն իր վարձը առնելու է, ինչպէս նաեւ այն օրիորդը, զոր անխոհեմաբար յիշած ես, իր աշխատութեան վարձը կառնէ, որովհետեւ նա որը աղջկանց դպրոցին վարժուհին է, որ ընթերցմունք եւ ձեռագործ կը սորվեցունէ, հոն գացող այցելուաց համար սպասուոր պէտք է, եւ հոն աշխատողն ալ հոն կերակուր պիտի ուտէ, Հասկցար հիմա Պ. փունջ. եթէ միւս հարցումներդ ալ ասոնց նման են նէ, ափսո՛ս քու խելքիդ, քեզ ի՞նչ փոյթ, դուն ո՞վ ես, հիւանդանոցի սաւանները պատանքի տեղ կը գործածուի եղեր, կոչկակարները երբեմն պարապ կը նըստին եղեր, քեզ ո՞վ դատաւոր դրաւ, Զիմարները կաշխատողներն եղեր, աս ալ աստղապահական կանոնաց հակառակ է» եղեր, բժշկութիւնն ալ գիտես Պ. փունջ, ո՞ր բժշկարանը դաս առեր ես, խելքիդ վիճակն ի՞նչպէս է, Հիւանդանոցի գրասենեակը առնելիքօր կամ տալիքօր կերթայ եղեր, այսինչ հիւանդը կընդունուի, այն ինչը չընդունուի եղեր, պայմանները դո՞ւն ես դրեր, դուն աշխարհի մէջ չէ՞իր, օրէնք, իրաւունք եւ մարդկութիւնն չե՞ս ճանչնար, մընչեւ ե՞րբ ասանկ յամառեալ եւ հասարակաց բարութեան թշնամի պիտի մնաս, ի՞նչ, կաշխատի՞ս որ, մնացած մէկ քանինքո՞ն ալ քու դատմանդ կարողութիւնը ճանչնաս, հոգ մըներ, քեզ պէտք եղածին պէս ճանչցած են, որ մը հատուցումը կընդունիս:

Պ. փունջ, թէ եւ աս դարուս մէջ քեզի պէս թերթիկներ ալ պէտք են գտնուիլ, որպէս զի հասարակութիւնը կարող ըլլայ օգտակարին եւ անօգտակարին մէջ տեղի անհուն տարբերութիւնը դիւրաւ տեսնել, բայց եւ այնպէս ճշմարիտ մարդկութեան պատկերն առանց ի խոր սրտէ գաւ զգալու չեն կրնար նայիլ քեզի պէս խեղճուկ թերթի մը վրայ: Եւ քեզ նման թերթի մը ապրիլը՝ ազգին դեռ յետադէմ վիճակի մը մէջ գտնուիլը կը յայտնէ:

Պ. փունջ, ցաւօք արտի կըսեմ (թէ եւ քեզի քիչ մը խրատ տալ կուզեմ, բայց դուն խրատ ընդունողներէն չես) որ՝ դուն տղիտութեան յորձանաց առջին ինկած խաղալիք եղած կը տարուբերիս եւ երբեմն ալ հաստատուն ժայռերու զարնուելով կը վիրաւորիս եւ ամէն խրատ նախատիւք կը համարիս, իբրեւ թէ քեզի կարեւորութիւն տըռած ըլլան Դուն պէտք է գիտնաս որ՝ ամէն գրական ասպարէզն երեւցող թերթ ապրելու արժանի չէ, ամէն ձեռքը գրիչ ունեցող, հեղինակ կամ խմբագիր կոչուելու արժանի չէ:

Հրապարակութեան մը գլխաւոր պաշտօն պէտք է զ. նապան գիտութեանց վրայ ծանօթութիւն,

արհեստներու վրայ տեղեկութիւն եւ աշխարհի ամէն եղելութեանց վրայ անընդհատական ուշադրութիւն ունենայ, առանց ասոնց բոլոր պրտածք անպիտան եւ մանաւանդ վնասակար լարծիւն չաղախ մը կը համարուին եւ այնպիսեաց արժէք տուողներուն ալ պատիւ չեն բերեր:

Մի կարծեր Պ. փունջ, թէ քեզ կարեւորութիւն տալու համար աս աշխատութիւնը յանձնառու եղայ, ալ ի պատիւ արդոյ ընթերցողաց մէկ քանի խօսք քրի:

Արգոյ ընթերցողք, քանի որ Հիւանդանոցի վիճակը քննելու համար ամէն մարդու դուռ ու տօմար բաց են, ու եւ իցէ մէկը իբրեւ խոհուն մարդ առանց երթալ քննելու իր լսածը, կնիւյ աբեղ ցիեղ հարցումներ կընէ, այնպիսին կամ յիմար է, եւ կամ վրնաս տալու դիտում ունի, որ իրտումը հասարակութեան արդար վրէժխնդրութիւնը իր վրայ կը հրաւիրէ:

Փրկչի հիւանդանոցի առջի խղճալի վիճակները կը յիշէք անշուշտ, որուն արդարեւ մարդկային սիրտ չէր դիմանար, իսկ արդի վիճակը հինին հետ բաղդատմամբ հին տեսնիւնը սփանդարան եւ հիմակուանը դրժարան անուանել կը պարտաւորինք: Փունջի այն իմարական հարցումներն պարզապէս թշնամական ոգիէ եւ նախանձէ ըզխած եւ հետեւապէս արդի բարեբարները զգուցեցունելով՝ հիւանդանոցը իւր առաջին ցաւալի եւ ողբալի կտցութեանը վերածելու ջանալ է:

Չէ՞ որ անցեալ տարի ոչ ոք համարձակեցաւ հիւանդանոցի խղճալի վիճակը բարուրեցու ազգասիրական գործը վրան առնել. մոռցուեցա՞ւ այն բոլորն. եթէ փունջի Պ. խմբագրը հիւանդանոցի հոգը իր վրան առնել յանդգնի նէ, կը յուսա՞յ որ հասարակութիւնն իրեն ձեռնտուութիւն պիտի գտնէ, ինչպէս փանոսեան գտաւ, կրնա՞յ վստահ ըլլալ եւ խօսք տալ նէ, թող հրապարէ, իսկ եթէ չկրնար վստահիլ (ինչպէս որ անոր ձեռքն եղած ատեն ստակ չտրուիլու րեւու պէս յայտնի է), ինչո՞ւ համար ստամոքս աւերելու կելլէ այն լղաւճուկ հարցումներովը, որք մարդկային զգացման եւ ընդհանրութեան բարութեանը դէմ են. ո՞ր զգացում ու գութ կրող մարդ կրնայ անոր դէմ վրէժխնդիր չըլլալ, մանաւանդ եղած անհաճոյ տարածայնութեանց նայելով՝ դուռ տգիտական թշնամութիւն մ'է ըրածը:

Ինչ եւ իցէ պարագայի տակ հարցում ընելու այն ատեն իրաւունք ունի ու եւ իցէ մէկը, երբ անկարելի է անձամբ երթալ կամ ինչ եւ իցէ միջոցով քննելու ու իմանալը, այն անձը՝ իրաւունք կունենայ լսածը իմացածը հարցունել:

Օրինակի համար, փունջի նկատմամբ հասարակութեան մէջ շատ անհաճոյ տարածայնութիւններ կան, աս տարածայնութիւնները քննելու համար մէկ որոշ կեղծոն մը չկայ որ երթամ անձամբ իմանամ, ուստի կը պարտաւորիմ հրապարակաւ հարցում ընել հասարակութեան, որ իրենց ըսածները ստուգեն կամ իրենց գաղափարն հաղորդեն, բայց փունջին հարցումները անտեղի են, քանզի ամէն օք կրնայ հիւանդանոց երթալ ու զածին չափ կենալ եւ քննել:

Ա. Ստոյգ է որ կըսուի թէ՛ փունջը՝ փրկի մեծ. Տնօրէնը՝ իրենց անօրէն կամաց չգիշանելուն համար անոր դէմ հակառակող գործաւորաց կայր գործիք մ'է եղեր:

Բ. Ստոյգ է որ կըսուի թէ՛ գործաւորին մէկը բռնութեամբ եւ ապօրինաւոր կերպիւ 15 տարեկան աղջիկը փրկիչէն առնել կուզէ, եւ տնօրէնը խեղացութեամբ ընդդիմութիւն ընելուն համար կը թշնամանայ, եւ իր պաշտօնն ալ երեսի վրայ կը մընայ, որով հաշուոյն գործն ալ կուշանայ, եւ կերթայ հակառակ գործութեամբ փունջին փորը կը մտնայ:

Գ. Ստոյգ է որ կըսուի թէ՛ փունջին գլուխը խորշակահարի հանգիպեր է, անոր համար ափեղցիկը կը ժայթքէ:

Դ. Ստոյգ է որ կըսուի թէ՛ Հիւանդանոցի արդի տնօրէնութեանը նախանձելով աւել կուզէ մասնաւոր թշնամութեամբ:

Ե. Ստոյգ է որ կըսուի թէ՛ Սըվազի առաջնօրէն ստակ բռնելու համար անոր դէմ գրուած նամակ մը հրատարակելու միտք ունենալը առաջուց ծանուցում կընէ:

Չ. Ստոյգ է որ կըսուի թէ՛ անցեալները փունջը թրապիպօս գրեր է մէկուն որ քեզի դէմ նամակ մը եկած է, եթէ 10-15 լիրա չղրկես նէ, կը հրատարակեմ, եւ առ պատճառաւ ամէն օր փութախանէ կը վազէ եղեր:

Ը. Ստոյգ է որ կըսուի փունջը՝ մէկ քանի տիպառաջ վարդապետէմը երկու տարուան փունջի ստակ ուզելու համար խմբագիրի չվայելու կերպիւ սոմօակ մը գրեր եւ բաց՝ Բերայի բանկալը ձգեր է որ տան. եւ այն, եւայն, եւայն:

Առանկ հարիւրաւոր իրապէս հարցընելու կետեր թէ եւ կան, բայց կը զգուիս խօսքը ընել, արժէք անգամ տալ չեմ ուզեր, քանզի թէ ես եւ թէ ուշիմ ազգասէրներ պինջը չառլաւ ճանչցած ենք: Այսուհետեւ մեր խօսքը մարդկային զգացում, ամուր բոբըր եւ իրենց իսկական տաղանդը ճանչցողներուն հետ է: Այլ կըթողում հիւանդանոցի տնօրէնին, որ իր պատիւը եւ նիւթական վնասը (եթէ պակաս ստակ եկաւ) պահանջէ, եթէ արժէք կուտայ, եւ արդոյ հասարակութիւնն ալ եթէ կըրցաւ մինչեւ ցարդ ազգասիրաբար աշխատողին արժէքը ճանչնալ եւ զննալու եւ իր պատիւն ու օգուտը զգալ եւ թշուառին վրայ իր գթալու պարտաւորութիւնը յարգելն է, թող իր պարտքը իրաւամբ կատարելէ ետ չկենայ:

ԽՈՍՐՈՎ

ԹԱՏՐՈՆ ՆԱՈՒՄ

1867 դեկտ. 22 ուրբաթ գիշեր ժամ 5

ՓԱՌԱԻՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

Հ. Դ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԳԵՍ ԱՋԳԱՅԻՆ

ԿՈՐԾԱՆՈՒՄՆ

ԽՈՒԹԻՆԵԱՆՑ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Թատրերգութիւն երգախառնի հինգ հանգէսս

ՀԵՂԻՆԱԳՈՒԹԻՒՆ Գ. Խ. ՍԵՏԵՃԱԻԱՆԻ

ԳԻՆԵՐ

Օթեակ Ա. յարկ 80 ղըշ. — Բ. յարկ 100 ղըշ. — Գ. յարկ 60 ղըշ. — Դ. յարկ 30 ղըշ.

Թիկնաթու 20 — նստարան Ա. 15 — նստարան Բ. 10 — մուտք 6 — վերնատուն 5 ղուրուշ.

Աս յիշեալ գիները ողջ ստակ՝ մէծի տիւն 20 ղըշ էն հաշուելով պիտի առնուի:

Տոմսակները ուրբաթ օրը կէս օրէն սկսուելով պիտի ծախուի, ուստի արդոյ ազդեցնոց իմաց կը տրուի որ իրենց հաւնած լոծային կամ նստարանին պիլէթը ցորեկուընէ առնեն նէ աղէկ կընեն:

Խաղը ազգային եւ լիմստալից է, եւ շատ ալ հաճոյական տեսարաններ կը պարունակէ եւ երգախառն է, կը յուսացուի որ այս ներկայացումն ալ անցեալ տարի ներկայացուած վարդան Մամիկոնեան անուն ողբերգութեան հեղինակին աշխատանքութիւնն ըլլալուն, որ այն ատեն մեծ ընդունելութիւն գրանելով ներկորդ անգամ ներկայացումը խեղրուեցաւ, արդոյ հասարակութենէն մեծ ընդունելութիւն գտնէ, որով աւելի քաջալերութիւն մը ըլլայ արդոյ Մ. տէֆեանի ուրիշ օգտակար թատրերգութիւններ ալ պատրաստելու հետք: Հետեւ որ արդարեւ մեծ փառք է հայ յոթեան Հայ թատերարեմին վրայ Հայ գերասանը, Հայ հեղինակութեամբ Հայ ներկայացում ունենալն:

Ի Լ Ա Ն Ա Թ

ՎԻԵՆԱ ՎԵ ԲՈՒՍԻԱ ԲԱՆԳՈՒԱՐԸ

Վիեննանքն հէր նէվի բիանգօ ազաւ. օնլարը վէ բրօմէսլէրի, Գալաթաա Գ. միսիօն իսանը գարուսու եանընտա Ն. 16 սարապ ճանէթօ տիւքքեանընտա Վի. րուլթօ օլունմագտա արը:

Մերգում Մ. ճանէթօ հիւ պիր քիմ. սէ իլէ շէրիքլիլի օլմսեղալ, վէ սաթաղը պիլէթլէր իւղէրիտէ գալալ օլմեաւա. ղը թէեմին գըլնմըշ մանասընտա պիր եէշիլ պէյպա միւհիւր պատըմըշ արը:

Պու տէֆա վիեննատա ալաֆրանկա յունվար պիրտէ շէքիլէճէք քրէտի մօպի. լիեէ փիւնքօսու, ազսիօն վէ բրօմէսլէրի տախի պու մահէլտէ ֆիլուլթօ օլունմագտա արը:

Քէյպիլք պու մահէլտէ Բուսիանըն պիրինձի վէ իքինձի իսթիգրաղալըր բիւն. գօսունաւն պիլէթլէրի ֆիլուլթօ օլունմագտա արըն սէնէվի 0/0 տէ 3 ֆա. յիգի օլունպ, վէ իքի տէֆա շէքիլէր. վէ պու տէֆա յունվար 1/13 տէ շէքիլէճէք տիր:

Պիրինձի Ն. 0. գազանաւաղ 200 պին. իքինձի 75 պին. սայիրլէրի հաքէպա 40 պին. 25 պին. 10 պին. 8 պին. 5 պին. վէ 500 գարպօն գազանաւաղալ արը:

ՎԻԵՆԱ ԲԱՆԳՈՒՈՒ

Ավսթրիա տէվէթի ֆէխմէսի թա. րաֆընտան թէեմին օլունուպ, վիեննա. տա պուլունան միւթէպէր բիեանգօա. ընն կէրէք «Բրօմէս» վէ կէրէք «Լօզ» թապիր օլունան գօնսօլիտլէրտէն, Գու. եուլմու չարչըսընտա Գարաւանլը օղլու. սօգաղընտա Ն. 26 Պաղտալտէան Մը. կըրտիչ աղանըն տիւքեանընտա ֆիլուլթօ օլունուր:

Ջիւստէ մայիւմաթ իսթէյէն գաթ. լարըն, մէրգումէ միւրաճաւթ իթմէլէրի իշին իսասէթէն իլան օլունուր:

Ամէլիյաթը ճէրրահիլէ իճրա իթմէքսի. զին, աղընան տիւլէրին վէնալարընը (աղ. րը) տէֆ ու իզալէ իթմէք, վէ տիւլէրի չըգմըշ օլանլարըն տիւլէրինն եէրէրինէ գահ. մէթսիգէթ թապիր վազ օլունմուշ կիպի, դա. մէթ տիգգաթ օլունսա պիւն անալալմամագ. իւղըն տիւլ գօյմագ, վէ տախիլի ֆէմտէ վէ շէնէտէքի էմրալ վէ գուրուշ վէ թէգէլ. լիւլի տէնտանա թէտալի իթմէք, վէ տիւլ. լէրի թագիրաթընտան, եանի եէրէրինտէն օյնսեղալ, պիրթարաֆա տէվիլիտիլէրի հալ. տէ եէրէրինէ գօյմագ, վէ տախիլի ֆէմթ թէմիլէմէքտէ, վէ բասլանմըշ վէ տիւնա. լանմըշ օլան տիւլէրին բաս վէ քիլէրինի չը. գարպա, ճէվէրի գաթիսիլի թէմտիլ իթ. մէքտէ, վէ աղըն ֆէնա գօգուլարընը իս. լան իթմէքտէ վէ ալթըն վէ լասթիքտէն դա. յէթլէ լաթիֆ վէ բանա վէ սալապէթլի վէ իսաֆիֆ եէմէք եէնտիկի վագըթտա պիր գա. րար ու գիւնան վէրմէգ ալեա եէրի վէ չը. գար գօնուր տիւլէր եամաագտա օլան փա. լիսիլ թապիպ տիւլէր Մ. Բէլէզ Պէյ-օղլուն. տա կլալանի սօգաղընտա 2 նիւմէրտա իս. քեան իթմէքտէ, վէ ալաֆրանկա սասթ 9 տան 4 է գատար կէլէն վէ կիտէլէրէ ա. մէլիյաթը մէգքիւրէեի իճրա ոյլմէքտէ օ. լունպ քէնտիլիլի կէօրմէք վէ կէթիլթմէք միւրաա իտէնլէր օլուն իսէ, օրատան սիւալ իթտիրմէլէրի:

50

Կպրոցի եւ կամ տան մէջ Հայկաբա. լունթիւն, աշխարհագրութիւն եւ Գաղ. ղիւրէն դաս տալու, եւ ասեղնագործու. թիւն սորվեցունելու կարող վարժու հիլ. մը պէտք ունեցողները, Պէշիքթաշ ճէր. րահ Բօհաննէս աղալէն կրնան տեղեկու. թիւն առնել:

ՈԱՆԻՊ ՂԱԶԷԹԱ

ԳԱՐԱԳԵՑ 8. ՓԱՆՈՍԵԱՆ

ԼԵԱՄԱՆ ԼԵԱՄԱՆԳՆ ԹԱՊԱՆԵՍԻՆԵՅ Գ. Բ. ԳՆԱՆԱՆ ԶՈՐԱՆ ԶՈՐԱՆ, ԶՈՐԱՆԱՆ ԱՆՈՐԱՆԱՆ ԳՐԱԳԷՆԻՐ ԳՐԱԳԷՆԱՆ ՆԻՍԵՐՈ 167: